

891-71
h-67



Հրատարակութիւն «Ն Ի Է Ր Մ Ա Ն Ո Ի Կ Ն Ն Ր Ի Ն»
Ընկերութեան № 24

Ի Ն Ֆ Ա Ն Յ Ի Ե Ի

Թ Ճ Ն Ա Մ Ի Ն Ե Ր

Գ Ի Ն Ն Է 8 Կ Մ Պ .

Պատմաժբ ուսու-ճապոնական
պատերազմից

Թարգմ. ՍօՖ. Գալսեան.

○○○⊙○○○

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Ն. Աղանեանի, Պօլից. 7
1915

25 SEP 2006

Հրատարակութիւն «Ն Ի Է Բ Մ Ա Ն Ո Ի Կ Ն Ե Բ Ե Ն» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ № 24 199 NOV 1010

897.71

27

ԻՆՖԱՆՏԻԻ

h-67

պ.

ԹՃՆԱՄԻՆԵՐ

Պատմաժբ ուսու-ճապոնական
պատերազմից

Քարզմ. ՍօՖ. Գալսեան.

© 1915

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7
1915

7

26 APR 2013

17315

ԹՇՆԱՄԻՆԵՐ

Մի ընդհարումից յետոյ, սր տեղի ունեցաւ գաօլեանով *) ծածկւած մի դաշտում ոռոսաց առաջապահ զօրագնդի և ճապոնացոց մէջ, մերոնք ստիպւած էին վիրաւորներին թողնել ու շտապով նահանջել:

Ճապոնացիք էլ միւս կողմից իմանալով, որ ոռոսներին օգնութիւն է հասնում, նոյնպէս շտապեցին կուրի դաշտը մաքրել:

Եւ անա այնտեղ, ուր քիչ առաջ եռում էր կռիւր, տիրեց մեռելային լռութիւն: Այդ լռութիւնը երբեմն ընդհատւում էր թնդանօթների խուլ որոտումներով, որ արագահաս մրրկի արձագանքի պէս գալիս էր տարածւում՝ հեռւում վերսկսւած կուրից:

Շոգ ու տօթ օր էր այդ օրը: Օդը կիծացած, տաք բաղանիքի օդի պէս: Ամեն շնչաւոր, փախչելով կէսօրւայ արևի կիզիչ ճառագայթներից, հով ու սուեր էր փնտրում իր համար: Մի ագռաւ միայն՝ անջատելով իր

*) Եղեգնաձև, փունջ փունջ գլուխներով մի բոյս:



246
44

երամից, որսի յոյսով պտոյտներ էր անուժ
կուրի դաշտի վրայով:

Մ գնդից մի երիտասարդ զինւոր, Ստեփան
Մեշչերեակով անուժով, աջ թևից վիրաւորւած,
ցաւից և արիւնհոսութիւնից ուշաթափւել մնա-
ցել էր կուրի դաշտում: Ընկերները նրա ընկնելը
չէին նկատել:

Բաւական ժամանակ նա այսպէս անզգայ
պառկած էր, երբ վերջապէս ուշքի եկաւ, լայն
լայն բաց արաւ աչքերը, զարմացած շուրջը
նայեց և չէր հասկանում, թէ սրտեղ է ինքը:
Նրա չորս-բոլոր իր աւելանման գլխիկները կոտ-
ցրել խորհրդաւոր խշխշում էր գաօլեանը, որի
բարձր ու խիտ ցօղունները ամեն կողմից շրջա-
պատել ու ծածկել էին վիրաւորին օտար աչ-
քերից:

«Ո՞րտեղ եմ», ճըզնում էր մտաբերել Ստե-
փանը ու ցանկացաւ բարձրանալ, բայց յենւե-
լով վիրաւոր թևի վրա՝ սարսափելի ցաւ զգաց
ու իսկոյն յիշեց ամեն ինչ:

Այն մտքից, թէ ընկերները թողել են իրեն
մենակ, վիրաւոր ու անօգնական, այդ անձանօթ
տեղում, սիրտը կսկծից ճմշւեց, ու նա հասկա-
ցաւ իր սարսափելի դրութիւնը:

Ստեփանը զգուշութեամբ ոտքի ելաւ որ
նայի շուրջը, սակայն բարձր գաօլեանը ամբող-
ջովին ծածկում էր նրան ու խանգարում ծա-
նօթանալու տեղի հետ: Վէրքը ցաւում էր ու

արիւնը չէր կտրում: Ստեփանը անօգնական
վայր ընկաւ գետնին, յետոյ հանելով պայու-
սակից մի մաքուր շապիկ՝ ատամներով պատ-
ուեց նրանից մի կտոր և առողջ ձեռքով մի
կերպ վէրքը փաթաթեց, ապա շալակելով պա-
յուսակը ու հրացանը առողջ ձեռքն առնելով,
առանց պարզ հաշիւ տալու իրեն, գնաց առաջ
խիտ գաօլեանի միջով:

Շուտով նա դուրս եկաւ զինւորների ոտ-
քերով տրորւած մի բացատ, որտեղից շրջակայ-
քը լայն երևում էր:

Նա նկատեց, որ գաօլեանի դաշտը փուլած
էր անագին տարածութեան վրա և միայն շատ
հեռւում, տեղ տեղ նշմարւում էին անտառա-
պատ լեռներ:

—Ո՞ր կողմը ուղղեմ քայլերս, սրտեղ են
այժմ մերոնք և սրտեղ ճապոնացիք: Ի՞նչպէս
անեմ, որ մերոնց փոխարէն չընկնեմ ճապո-
նացոց ձեռքը, — ասա թէ ինչու մասին էր մը-
տածում վիրաւորը:

Ստեփանը սկսեց մտաբերել ու կշռադա-
տել:

—Աւելի ապահով կը լինի գնամ դէպի ա-
րևմուտք, որովհետև մեր զօրքը այն կողմից
եկաւ, — մտածում էր նա:

Բայց դարձեալ մի հարց. «Ի՞նչպէս որոշեմ
արևմուտքը, երբ արևը համարեա գլխիս վերևն
է կանգնած:»

Ստեփանը դժւարանում էր որոշել ու ընտրել իր բռնելիք ճանապարհը:

Կէսօրւայ արևի կիզիչ ճառագայթները այրում էին նրա գլուխը ու ծարաւը, անտանելի ծարաւը տանջում էր նրան և պղտորում գիտակցութիւնը: Նրան թւում էր, որ ինքը մենակ մի ամբողջ տակառ կարող է դատարկել, մինչդեռ, կարծես ջգրու, իր ջրամանում մի կաթիլ անգամ չէր մնացել:

Այս ու այն կողմից բարձր պատի նման կանգնած էր գաօլեանը և նրա միջով անցնելը անալի էր:

«Իսկ եթէ ճապոնացոց, կամ որ աւելի վատըն է՝ այստեղ խմբերով թափառող խունխուղների ճանկն ընկնեմ:»

Զննող հայեացքով Ստեփանը աշխատում էր թափանցել խորհրդաւոր ձայներով խշխշացող գաօլեանի խորքերը, ցանկալով գուշակել այնտեղ թագնւած վտանգը:

Եւ յանկարծ, — նրա սիրտը թնդաց, նա տեսաւ, որ գաօլեանը մի տեղ տատանւեց և մէկը, մարդ էր թէ գազան, գաղտագողի սկսեց սողալ ուղիղ դէպի ինքը:

Ստեփանը իսկոյն հրացանը սեղմեց ուսին, աշխատելով վիրաւորւած աջ ձեռքով բռնել չախմախի ոտը, որ խորհրդաւոր արարածը գաօլեանի միջից երևայ թէ չէ՝ արձակի:

— Սպասիր, եղբայր, մի արձակի. ես էլ քեզ

պէս վիրաւոր եմ, — հնչեց յանկարծ մի ձայն:

Համոզւած լինելով, որ այդ վիրաւորը ուս է, Ստեփանը առաջ վազեց նրան օգնելու, բայց զարմացած մնաց, երբ տեսաւ որ գաօլեանի միջից դուրս սողացողը մի ճապոնացի է:

Ստեփանը ինքն իրան կորցրեց և չըզգիտէր՝ ինչ անի:

Անձանօթի մուգ դեղնագոյն գէմքը ծուռ դասաւորւած աչքերով և ճապոնական գինուորականի նշանագգեստը ոչ մի կասկած չէին թողնում, որ իր առաջ կանգնածը իր հայրենիքի թշնամիներէցն էր:

— Եղբայր, մենք իրար մէջ բաժանելու բան չունենք, ուստի աւելի լաւ է օգնիր ինձ, գուցէ ես էլ քեզ մի բանով օգտակար կարողանամ լինել, — հանգիստ ձայնով արտասանեց ճապոնացին՝ դժւարութեամբ քարշ տալով գնդակից ջարդւած իր ոտքը:

Տեսնելով թշնամուն անգէն ու անպաշտպան՝ Ստեփանը հանգստացաւ, նա նոյնիսկ ուրախացաւ, որ իր առաջ գոնէ կենդանի մարդ է տեսնում:

— Հը, ինչ է, քեզ էլ է կպել գնդակը, — կարեկցաբար արտասանեց նա, ցած գնելով հրացանը ու մօտենալով, որ օգնի նրան գաօլեանից դուրս գալու:

Ստեփանի օգնութեամբ ճապոնացին դուրս եկաւ բացատր և ծանր-ծանր ընկաւ զետիւն:

Յետոյ նա հանեց իր պայուսակից վիրակապ կտաւի և վէրքի վրա մի ինչ որ սպեղանի դնելով՝ խնդրեց Ստեփանին որ օգնի վէրքը փաթաթելու: Ստեփանը ուրախութեամբ օգնեց: Իր ոտքը փաթաթելուց ու կապելուց յետոյ ճապոնացին առաջարկեց Ստեփանին նրա վէրքն էլ կապել ու նոյն սպեղանուց դնելով նրա վէրքի վրա՝ շատ հմուտ կերպով փաթաթեց Ստեփանի վիրաւորւած թևը:

— Ինչ շոգ է, մօտդ խմելու բան չե՞ս ունենայ, բարեկամ, — անհամարձակ հարցրեց Ստեփանը:

— Ի՞նչպէս չէ, իմ ջրամանը դեռ չէ բացւած. բայց կուզես կոնեակով խմիր, սա ծարաւը աւելի լաւ է կոտորում, — առաջարկեց ճապոնացին ջրամանը նրան տալով ու պայուսակից մի ամբողջ շիշ կոնեակ դուրս քաշելով:

Եւ երկու վիրաւորները արևի կիզիչ ճառագայթներից պաշտպանւելու համար զաօլեանից խրճիթի նման մի բան շինեցին ու տակը մտան. հեռատես ճապոնացին երբեմն պայուսակից հանում էր կոնեակ ու սակի, *) և իրար հիւրասիրելով և Ստեփանի մօտ մնացած պաքսիմատից սւտելով նրանք սկսեցին հանգիստ զրոյց անել իրար հետ:

*) Սակի — բրնձէ օղի, որ պատրաստում են ճապոնիայում:

— Անունդ ի՞նչ է, — հարցրեց Ստեփանը իր նոր ծանօթին:

— Անունս Գանկօ է, — պատասխանեց նա. — Իսկ քո՞նը:

— Ստեփան: Դու մեր լեզուով այդպէս լաւ խօսելը ռրտեղ ես սովորել, — հետաքրքրեց Ստեփանը:

— Պատերազմից առաջ Վլադիվաստոկի խանութներէից մէկում մի քանի տարի գործակատար եմ եղել, — պատասխանեց ճապոնացին:

— Ընը, — ասաւ Ստեփանը, — ուրեմն դու ռուսներին վաղուց ես ճանաչում: Մի՞թէ քեզ նրանք նեղացրել են, որ դու մեր դէմ ես դուրս եկել այժմ:

— Ի՞նչու պիտի նեղացնէին, բայց չէ՞ որ պատերազմ է յայտարարւած և ոչինչ չէր կարելի անել: Եթէ մերոնք բոլորն էլ պատերազմ էին գնում, ես մի՞թէ կարող էի մնալ Ռուսաստանում: Ահա դու էլ ես դուրս եկել մեր դէմ, մենք քեզ մի որևիցէ փաստ հասցրել ենք, — իր հերթին հարցրեց ճապոնացին:

— Ասուած ոչ անի. մինչև այս պատերազմը ես ձեր մասին ոչինչ չէի լսել, չըզիտէի էլ թէ աշխարհիս երեսին այդպիսի ազգ կայ: Բաժանեցին ինձ իմ գութանից, տուն ու տեղ թողնել տւին թէ՛ գնա, կուիր: Իսկ ինչո՞ւ համար, ի՞նչ ենք ուզում մենք ձեզանից և ի՞նչ դուք մեզանից, այդ ես չըհասկացայ: Երևի դուք

մերոնց նեղացրել էք, թէ չէ զուր տեղը հօ չէինք սկսի կուել ձեզ հետ:

—Մեզ մօտ էլ նոյնն են ասում, — խուսափելով հարցից ասաւ ճապոնացին: — Բայց ինչ էլ որ լինի, երբ մի ամբողջ ժողովուրդ դուրս է գալիս միւսի դէմ, մի հատիկ մարդ կարող է հրաժարուել իր հայրենիքը պաշտպանելու պարտականութիւնից:

— Իսկ ճիշտ է այն, ինչ որ մեր զինւորներն են ասում, իբր թէ այս հողը, որի վրա մենք կուում ենք այժմ, ոչ ձերն է, ոչ էլ մերը, այլ ուրիշինը, չինացոցը և որ դուք մի ինչ որ ծովի էն կողմից էք եկել, — հարցրեց Ստեփանը:

— Բոլորովին ճիշտ է, այս հողը չինացոցն է, — ասաւ Գանկօն:

— Այն ժամանակ էլ ինչու էք դուք եկել ու պատերազմում ուրիշի հողի պատճառով:

— Հէնց նոյն պատճառով, ինչու որ դուք էք եկել տասնեակ հազարաւոր վերստ դէսը: Մեր կարծիքով, մենք աւելի իրաւունք ունենք այս հողերի վրա, քան թէ դուք, որովհետև ձեզանից առաջ ենք եկել այս երկիրը: Սրանից դեռ տասը տարի առաջ մենք այստեղ կուել ենք չինացոց հետ և յաղթել նրանց, որից յետոյ նրանք մեզ Պորտ: Արտուրը պիտի տային: Մեր վէճի մէջ խառնուեցիք ուսներդ և առանց մի կաթիլ արիւն թափելու ձեզ վերցրիք Պորտ: Արտուրը:

— Էհ, ինձ որ ասես թէ կուզ ամբողջ Մանջուրիան գետնի տակ անցնի, պէտքս չէ, — ասաւ Ստեփանը: — Այս տեղը չինացոց համար էլ է քշութիւն անում. մի տես մեր շուրջը ամեն տեղ ցանքսեր են ու ցանքսեր, իսկ լեռները վրա միայն քար ու աւազ է: Ի՞նչ կարող ենք մենք այստեղ անել: Կարծես մեր Մայր Ռուսաստանի սեփական հողերը քիչ են: Երբ մենք այստեղ էինք գալիս, միայն Սիբիրի միջով անցնելու համար մի ամբողջ ամիս պէտք եկաւ: Իսկ միւս մեր անմշակ հողերին ծայր ու սահման կայ: Էլ ինչներին պէտք եկաւ չինացոց այս հողը: Է՛հ, մարդկային ազահութիւն:

Այսպէս խաղաղ զրոյց էին անում երկու վիբաւոր թշնամիները ու ժամանակ առ ժամանակ կոնեակով ու սակիով բերանները թրջում:

— Ամուսնանցած ես, — հարցրեց յանկարծ Ստեփանը:

— Ինչպէս չէ, տանը թողել իմ կնոջս և երկու երեխաներիս: Սպասիր՝ նրանց լուսանկարը ցոյց տամ քեզ, — պատասխանեց Գանկօն:

Եւ քրքրելով պայուսակը մի կաշւէ պատեանից դուրս քաշեց մի լուսանկար, որի վրա նկարւած էին մի երիտասարդ գեղեցիկ ճապոնուհի ազգային տարազով ու երկու փոքրիկ տղաներ, ածելւած գլխիկներով՝ գլխի մէջտեղը մի մի փունջ չ'ածելւած մազերով:

—Կինդ գեղեցիկ է, փոքրիկներդ էլ յաւն են,—գովեց Ստեփանը:

—Հաշտ ենք ապրում և չեմ նեղացնում նրան, որովհետև խելօք կին է: Սպասիր, քեզ կարդամ նրա նամակը,—թշնամու գովասանքից խրախուսւելով ասաւ Գանկօն:

Նա կաշէ պատեանից մի ամբողջ կապոց նամակներ հանեց և գտնելով նրանց մէջ հարկաւորը՝ սկսեց Ստեփանին մի ինչ որ նկար ցոյց տալ, որ նամակի աջ երեսի վրա էր նկարւած և ներկայացնում էր մի կին երկու երեխաներով:

—Այ, տես,—ասում էր նա,—այս նկարել է կինս. սա ինքն է, սա էլ երեխաներս են: Այստեղ գրւած է՝ «Են եմ և քո երեխաները»: Իհարկէ նկարը շատ քիչ է նմանում իրենց, բայց հանաքի համար է նկարել: Այժմ լսիր թէ ինչ է գրում իր նամակի մէջ, ես կը թարգմանեմ:

—Ահա նրա խօսքերը.

«Նս ցանկանում եմ, որ դու մոռանաս ինձ և երեխաներիդ: Յիշիր, որ դու մի կին ունես միայն և զաւակ—այդ մեր հայրենիքն է. իմ մասին բոլորովին մի մտածի:»

Կարդալով այս խօսքերը ճապոնացին հպարտութեամբ նայեց Ստեփանին՝ սպասելով նրա հաւանութեանը:

Բայց Ստեփանը նստած էր զարմացած, չը հասկանալով նամակի իսկական միտքը:

—Սա ի՞նչ է. դուրս է գալիս որ կինդ հրաժարւում է քեզանից—հարցրեց նա:

—Պատերազմի ժամանակ՝ այո, հրաժարւում է. նա չի ցանկանում, որ ես պատերազմի ժամանակ ուրիշ բանի մասին մտածեմ, բացի իմ զինւորական պարտականութիւններս:

—Եւ ուրիշ էլ ոչինչ չէ գրում, ոչ տնտեսութեան, ոչ ընտանեկան գործերի մասին,—շարունակեց Ստեփանը զարմացած:

—Է, ինչո՞ւ պիտի այդ բոլորի մասին գրի ինձ. չէ՞ որ միևնոյն է, ոչնչով այստեղից նրան օգնել չեմ կարող, էլ ինչո՞ւ իմ միտքը պտորի տնային հոգսերով:

—Իսկ եթէ քեզ սպանեն:

—Ի՞նչ կայ որ. միևնոյն չէ՞, չէ՞ որ ամեն մէկս վաղ թէ ուշ պիտի մեռնենք, իսկ ո՞ր մահը կարող է աւելի երջանիկ ու ցանկալի համարւել, քան հայրենիքի համար մեռնելը: Մենք ճապոնացիքս սիրում ենք մեր հայրենիքը հօրից, մօրից ու զաւակներից աւելի և նրա ազատութեան ու երջանկութեան համար, նրա քաղաքացի համարւելու մեծ պատւի համար ինչ ասես որ չենք գոհի: Կինս վախենում է, որ եթէ պատերազմում իր և մեր զաւակներին մասին մտածեմ, կը շեղւեմ իմ զինւորական բարձր պարտականութիւններից և ահա որպէսզի ես ընտանիքի մասին չը մտա-

ծեմ, աշխատում է ինձ հանգստացնել: Դէհ, հիմա էլ լսիր՝ ինչ է գրում մայրս:

Գանկօն բացեց մի ուրիշ նամակ ու կարգաց:

«Ես բաժանեցի քեզանից, երբ դու նաւ էիր նստում: Գիտեմ, որ Ճապոնիայի բախտն ու փառքը պահանջում են մեծ զոհողութիւն: Իմ մասին դու բոլորովին մի անհանգստանայ: Իմացիր, որ սովածութիւնից չեմ մեռնի, իսկ քո մահով կը պարծենամ, գիտենալով, որ ունեցածիս ամենաթանգագինը նւիրեցի հայրենիքիս:

«Երէկ մենք բոլորս գնացել էինք յարգելի տիկին Սանին շնորհաւորելու, որ նրա որդին, ինչպէս վկայում է կայսերական հրովարտակը, սպանւել է իր գնդի առաջին շարքերում: Տիկնոջը, որ նստած էր հպարտ, հանգիստ, թագուհու նման, ամբողջ գիւղը յարգանք մատուցեց: Յետոյ մենք գնացինք նրա որդու ուսուցչի մօտ. նրան էլ շնորհակալութիւններս յայտնեցինք, որ իր աշակերտին այնքան ազնուութիւն ու այնքան հայրենասիրութիւն է ներշնչել»:

— Զարմանալի ժողովուրդ էք դուք, — ասաւ Ստեփանը: — Եւ միթէ քեզ ճանապարհելիս ոչ ոք, ոչ մայրդ և ոչ էլ կինդ լաց չեղան:

— Լաց եղան. — գայրոյթով բացականչեց ճապոնացին: — Բայց այդ ամօթ ու խայտառակութիւն կը լինէր, ոչ միայն ինձ, այլ և մեր ամ-

բողջ տոհմի համար: Լաց լինել... Ինչի՞ համար լաց լինել. նրա՞ համար, որ մարդս արժանացել է իր հայրենիքը, իր ընտանիքն ու ազգակիցներին պաշտպանելու բարձր պատւին, որ նա հնարաւորութիւն է ստացել իր կեանքը զոհելով իր սէրը դէպի նրանք ապացուցելու: Միթէ ձեզ մօտ այդ բոլորի համար լաց են լինում:

— Ի՞նչ ես ասում, ինչպէս լաց չեն լինում, — ասաւ Ստեփանը: — Մայրս դեռ ճամփի պատրաստութիւն տեսնելիս միայն՝ մի գետ արցունք թափած կը լինի: Կինս էլ կովի պէս բառաչում էր: Իսկ երբ մեր գնացքը շարժեց նա դիակի պէս գետին փուեց. այդպէս էլ թողի եկայ...

— Դէ դու լաւ էիր քեզ գգում ճամփին այդ բոլորից յետոյ, ի՞նչ էր քո դրութիւնը:

— Ի՞նչ լաւ. ամբողջ ժամանակ շճածի նման էի, չը գիտէի՝ որտեղ եմ, ինչ է կատարում ինձ հետ, ապուշ էի կտրել: Ինձ թւում էր, թէ կինս իսկապէս մեռել է. ի՞նչ կը լինէր զաւակներին վիճակը առանց մօր. մուրացկաններ կը դառնային: Այստեղ Մանջուրիայում թէև դրա ժամանակը չէ, բայց և այնպէս շարունակ նրանց մասին էի մտածում: Հէնց որ կնոջս առաջի նամակը եկաւ, կամաց կամաց հանգստացայ: Փառք Աստծու, գոնէ այնտեղ ամեն ինչ տեղն է:

Վիրաւորները լռեցին: Ամեն մէկը իր մտածմունքներով էր զբաղւած:

—Իմ ցաւս այն է, որ անգրագէտ եմ,—ասաւ Ստեփանը ընդհատելով լռութիւնը:—Վերջին կուից առաջ, հէնց դուրս գալիս, տանից նամակ ստացայ, մէկն ու մէկին կարգալ տալու ժամանակ չեղաւ: Այնպէս էլ ընկած է պայուսակիս մէջ, չըզիտեմ՝ ինչ են գրում մէջը:

—Այն ժամանակ տներ ես կարգամ քեզ համար,—առաջարկեց Գանկօն:

—Դձու.—գարմացաւ Ստեփանը.—միթէ՞ դու մեր լեզուով կարգալ էլ գիտես:

—Ա՛յ քեզ բան. եթէ ձեր լեզուով խօսել արդէն գիտեմ, ի՞նչ մի մեծ բան էր կարգալ սովորելը:

—Ձեզ մօտ գրագէտները շատ են,—հետաքրքրեց Ստեփանը, փնտրելով նամակը:

—Մեզ մօտ ճապոնիայում անգրագէտներ չըկան. բոլորը գրագէտ են:

—Միթէ բոլորը,—չը հաւատալով վրա բերեց Ստեփանը:

—Բոլորը, ամենավերջին մարդն էլ: Գիրը մեզ մօտ ամենքին էլ մատչելի է և պարտադիր: Բոլոր երեխաները դպրոցական հասակում պարտաւոր են դպրոց յաճախել: Այդ բանի վերաբերմամբ մեզ մօտ շատ խիստ են:

—Ի՞նչ գարմանալի ժողովուրդ են այս ճապոնացիք. ափսոս միայն որ քրիստոնէսայ չեն,—մտածեց Ստեփանը:

—Ապա կարգա՛, եթէ կարող ես,—ասաւ նա

246
44

բարձրաձայն՝ հանելով պայուսակից նամակը:

Ճապոնացին սկսեց վանկ վանկ կարգալ:

«Բարև թանգագին և անզնահատելի ամուսին և մեր հայր Ստեփան Ալեքսանդրովիչ: Նախ և առաջ յայտնում եմ ձեզ, որ մենք փառք Աստծու բոլորս ողջ և առողջ ենք, նոյնը ցանկանում ենք սրտանց քեզ էլ:

«Սիրելի ամուսին, Ստեփան Ալեքսանդրովիչ, գրիր՝ ձրտեղ ես, ինչպէ՞ս ես ծառայում: Նամակներդ մեր գիւղի հասցէով ուղարկիր և ոչ քաղաքի, թէ չէ շատ են ուշացնում այնտեղ: Ես քեզ ՁՑ-ին ապրիլի գրել եմ, չըզիտեմ՝ ստացել ես նամակս թէ չէ: Չըզիտեմ՝ ցորենն ինչ անեմ, թողնեմ սերմի համար թէ՞ ծախեմ: Հազիւ-հազ կասեցինք, մշակ չէր ձարուում: Մարդ չըկայ որ դարդ ու վիշտ չունենայ. ամեն տնից էլ զինւոր կայ գնացած: Ասում էին՝ նպաստ պիտի տան նրանց, որոնց աշխատողին պատերազմ են տարել: Բայց բոլորին չեն տալիս:

«Տանուտէրի մօտ գնացի տեղեկանալու՝ արդեօք ինձ չեն տայ: Ոչինչ չըստացայ: Ասում է՝ դու գեռ բաւականին ցորեն ունես: Չեն մտածում, թէ գարնանը սերմացուն ձրտեղից պիտի վերցնեմ:

«Ի՞նչ ես խորհուրդ տալիս, Ստեփան Ալեքսանովիչ, կովը ծախեմ թէ՞ չէ: Ինքդ էլ գիտես, որ ձմեռը նրան պահելը դժւար կը լինի: Մի խօս-



քով ի՞նչ անեմ ես, յոյսս ինչի վրա դնեմ:

«Զաքարիեները խնդրել են իրանց որդու մասին տեղեկանամ քեզանից, որտե՞ղ է նա: Նրանից միայն Զատկին են տանեցիք նամակ ստացել ու աճյուղհետև էլ ոչ մի լուր:

«Այս տարի մեր հացը շատ սակաւ կը լինի. մեծ մասը կերել է մեր ձին, մատակը. անձրև քիչ եկաւ՝ խոտ չը կար:

«Նամակիդ աւելացրու՝ ընկերներիցը ո՞վ է քեզ հետ: Գոնէ նրա համար, որ ես նրանից էլ է տեղեկանամ քո մասին, եթէ քեզանից մի որևէ պատճառով լուր չունենամ, որովհետև ահա շատ շատերից արդէն ոչ մի լուր չըկայ և ոչ ոք նրանց մասին ոչինչ չըգիտի: Ահա թէ ինչու եմ հարցնում թէ ում հետ ես ծառայում:

«Ուղարկում եմ քեզ մէկ ըրուբի. այս էլ նրա համար, որ նամակս անպատճառ տեղ հասնի, թէ չէ ոչ բոլոր նամակներս են հասնում քեզ, իսկ փողով նամակները անպայման կըհասնեն: Դէ, ընդունիր բոլոր ծանօթներիդ բարևները: Շուտ գրիր, որ ուրախանանք, թէ չէ տխուր ենք:

«Մնանք ողջ և առողջ, որը և քեզ ենք ցանկանում, քեզ սիրող Աննա, Ալեքսանդր, Իւան, Միքայէլ Մեշչերեակովներ:

«Ընդունիր և ինձանից, Ստեփան Ալեքսանդրովիչ, խոնարհ ողջոյնս: Գո զրացի՛

Վասիլիյ Բուխարով:»

—Դէհ, շնորհակալ եմ,—ասաւ Ստեփանը, —ուրեմն մեզ մօտ բոլորն էլ ողջ և առողջ են:

—Այս ո՞վ է քեզ գրում,—հարցրեց Գանկօն:

—Նամակը կնոջիցս է, բայց նրա անգրագիտութեան պատճառով նրա բերանից երեւում է զրացիս, Վասիլիյ Բուխարովն է գրել, նա, որից ինձ բարև է ուղարկած:

—Հա, եղբայր, ձեր օրէնքները բոլորովին ուրիշ են,—մտախոհ արտասանեց ճապոնացին:

—Իսկ մի՞թէ ձեզ մօտ աւելի լաւ օրէնքներ են,—հետաքրքրեց Ստեփանը:

—Ի՞նչ ես ասում, ինչ համեմատութիւն կարող է լինել: Մենք հանգիստ սրտով ենք պատերազմ գնում, որովհետև զիտենք, որ մեր ընտանիքը մեր օրէնքների հովանաւորութեան տակ է մնում:

Եւ Գանկօն սկսեց պատմել Ստեփանին իր հայրենիքի կարգ ու կանոնի մասին, նրա ծաղկափթիթ կղզիների մասին, որ Գանկօի ասելով մշակած անվերջ այգիներ են, իրենց ժողովորդի աշխատասիրութեան, քաղաքակրթութեան և լուսաւորութեան մասին, այն անսահման սիրոյ, որ տածում են նրանք դէպի իրենց երկրի ազատ հիմնարկութիւնները:

Այսպէս նրանք երկար ժամանակ, մերթմերթ կոնտակ և սակի խմելով՝ զրոյց էին անում իրար հետ:

—Այդ ի՞նչ է ձեռքիդ,—հարցրեց ի միջի

այլոց Ստեփանը, տեսնելով ճապոնացու ձեռքին կաշէ ասպարանջանը ժամացոյցով:

—Սա՛. ժամացոյց է:

—Գիտեմ՝ ժամացոյց, բայց մի՞թէ ձեր բոլոր զինւորներն էլ ժամացոյց ունեն:

—Բոլորը չէ, բայց շատ շատերը ունեն: Ժամացոյցն և կողմնացոյցը, եղբայր, պատերազմի ժամանակ ամենահարկաւոր բաներն են զինւորի համար:

—Կողմնացոյց ես ասում. դա ի՞նչ բան է և ի՞նչու համար է:

—Ահա թէ ինչ է,—ցոյց տաւ Գանկօն ասպարանջանի մէջ ժամացոյցի կողքին փոքրիկ կողմնացոյցը:—Մի՞թէ դու չըգիտես՝ ինչի համար է գործ ածուում կողմնացոյցը:

—է, ռրտեղից գիտե՛նամ, կեանքումս տեսած էլ չըկամ:

—Սա, գիտես, այնպիսի մի գործիք է, որի շնորհիւ մենք երբէք ճամփաներս չենք կորցնի: Սրա գինը գոռչ է, բայց առանց սրան անծանօթ տեղում մարդս միկնոյն է թէ աչք չունենայ: Տեսնում ես անա այս սլաքը,—սկսեց նա բացատրել Ստեփանին կողմնացոյցի գործածութեան եղանակը,—ինչպէս էլ որ դու սրան շուռ ու մուռ տաս, սա միշտ մի կողմը ցոյց կըտայ, այն է հիւսիսը, իսկ հակառակ ծայրը հարաւը:

—Տես է՛, ինչ զարմանալի բան է: Ուրեմն

սրանով առանց արևի կարելի է իմանալ մէջ-գիշերեայ և միջօրեայ երկիրները:

—Իհարկէ: Սա արևից ու աստղերից էլլաւ ցոյց կըտայ քեզ այդ երկիրները:

—Հապա կարելի է դրանով իմանալ՝ ռրտեղ են մեր զօրքերը և ռրտեղ ձերը,—հարցրեց Ստեփանը, որ այրուում էր անհամբերութիւնից, որպէսզի իմանայ, թէ ինքը ռր կողմը պիտի գնայ:

—Այդ մենք կիմանանք քարտէզի օգնութեամբ,—ասաւ Գանկօն, հանելով պայուսակից քարտէզը և բաց անելով նրան ոչինչ չը հասկացող Ստեփանի առաջ:

—Ահա այն լեաւը, որ մեր աջ կողմն է, քարտէզի վրա այստեղ է: Մենք նրա արևմտեան կողմն ենք, իսկ քարտէզի վրա անայստեղ: Մեր զօրքը երէկ կանգնած էր անա այստեղ, այս շինական գեղի կողքին,—մատը քարտէզի վրա շարժելով ցոյց էր տալիս ճապոնացին,—ուրեմն դու ձերոնց հասնելու համար պէտք է գնաս ուղիղ անա այս կողմը,—համոզւած ձայնով ասաւ նա նայելով կողմնացոյցի վրա և ցոյց տալով դէպի հիւսիս—արևմուտք:

—Ուղի՞դ, այ այն կողմը,—հարցրեց Ստեփանը:

—Ուղի՞դ, անա այսպէս,—կրկնեց Գանկօն:

—է՛հ, ափսոս,—տկարութեամբ ասաւ Ստեփանը.—երանի այս անպիտան խոտը չը լինէր,

կորչել կարելի է մէջը և Աստուած գիտի թէ ուր դուրս կը գաս վերջը:

—Այո, առանց կողմնացոյցի այս գաօլեանով անցնելը շատ դժուար է,—հաստատեց ճապոնացին:—Ի՞նչ է, դու արդէն մտածում ես ճանապարհւելու:

—Իհարկէ, անվերջ մնալու հօ չենք այստեղ. վերջ ի վերջոյ պիտի շարժւենք թէ չէ: Միայն չը գիտեմ թէ քեզ այստեղ մենակ ինչպէս թողնեմ:

—Էհ, իմ մասին մի անհանգստանայ, աւելի լաւ է քո մասին մտածես. իսկ ես գուցէ մենակ քարշ գալով մի կերպ հասնեմ մերոնց:

—Ոչ, եղբայր, աղ ու հաց ենք կերել քեզ հետ. ես չեմ կարող քեզ այստեղ մենակ անօգնական վայր ձգել: Արի միասին գնանք, գուցէ ճանապարհը գտնենք, թէ չէ դու մի ոտքով ի՞նչպէս կարող ես այս տեղից դուրս գալ: Յետոյ ջուր չըկայ այլևս, բոլորը խմել ենք: Դու անջուր այս շոգին կըթուլանաս, կըմեռնես այստեղ: Յամենայն դէպս քեզ մինչև մի որևէ աղբիւր կըհասցնեմ:

Գանկօն շնորհակալութեամբ նայեց Ստեփանին և ըստ երևոյթին զգացւած էր նրա առաջարկութիւնից:

—Շնորհակալ եմ, ընկեր,—ասաւ նա,—դու եղբօր նման ես հետս վարւում: Այդ ճիշտ է որ վիրաւորը առանց ջրի այս շոգին անպատ-

ճառ կը մեռնի: Բայց լաւ չէր լինի, որ երկուսս էլ այստեղ մի փոքր սպասէինք, մինչև շոգը իջնի:

—Ինչ կայ որ, սպասել կարելի է: Գոնէ մինչև երեկոյ մի փոքր քնենք,—համաձայնեց Ստեփանը:

Եւ վիրաւորւած թշնամիները գլուխները սուեր տեղ դնելով՝ պարկեցին հանգստանալու:

—Ի՞նչ լաւ, բարի և համակրելի ժողովուրդ է այս ռուս ժողովուրդը,—մտածեց ճապոնացին անում:

Իսկ Ստեփանը երկար շուռ ու մուռ էր գալիս ու մտածում:

—Ի՞նչ խելօք ու պատրաստւած մարդիկ են այս ճապոնացիք: ՕՓ, դժուար, շատ դժուար կըլինի սրանց յաղթելը,—մտածում էր նա.—Դէ տես, սրանք բոլորն էլ զրազէտ են: Ահա սա իրեն ամեն տեղ տանն է զգում և ամեն բան էլ գիտի՝ և՛ դեղորայք, և՛ վիրակապութիւն ու ամեն գործիք էլ հետն է ման ածում: Իսկ մենք ի՞նչ ենք. խաւար ու տգէտ...

Արևն արդէն մայր մտնելու վրա էր, որ վիրաւորներն արթնացան:

—Դէհ, այժմ պէտք է վճռենք՝ որ կողմը գնանք,—ասաւ Գանկօն և հանելով պայուսակից հեռադիտակը սկսեց գննել շրջապատը:

—Էհէ, դու հեռադիտակ էլ ես ունեցել,—նորից զարմացաւ Ստեփանը:

—Բինոկլլ, — ուղղեց Գանկօն: — Մեր զինուոր-
ներից ամեն մէկը, եթէ նրա միջոցները նե-
րում են՝ ձեռք է բերում սրանից: Իսկ միթէ
ձեր զինուորներն չեն ունենում բինոկլլ:

— Էհ, զինուորներն ես ասում, այդ բանե-
րից մեզ մօտ սպաների մօտ էլ հազիւ գտնւի:

— Ուզո՞ւմ ես նայել, — առաջարկեց Գան-
կօն, տալով բինոկլլը Ստեփանին:

Ստեփանը վերցրեց երբէք իր ձեռքերում
չունեցած իրը և չիմանալով գործածելու
ձևը՝ սկսեց աչքերի առաջ շուռ ու մուռ տալ:

— Դէ՛ տես, — բարձրաձայն մտածում էր
նա, — ես իսկի սրան բռնել էլ չը գիտեմ:

Ճապոնացին բացատրեց նրան բինոկլլը գոր-
ծածելու ձևը և երբ Ստեփանը չըռած աչքերով
տեսաւ շրջապատը, նրա զարմանքին ու ուրա-
խութեանը շափ չը կար:

— Այ, սատանան տանի, այն լեռները որ
կապտին են տալիս հեռում, կարծես ամբողջ
լինեն. ամեն ինչ երևում է, ամեն ինչ: Ու-
րեմն դուք գուր չէք մեզ ետ ու ետքշում: Մի-
թէ կարելի է այս բոլորը հասարակ աչքով տես-
նել: Դուք ուրեմն ամեն մի չնչին բան առա-
ջուց տեսնում էիք, հա՛. կատարեալ հրաշք է:

Շրջապատը գննելով՝ վիրաւորները վճռե-
ցին առաջ գնալ դէպի մօտակայ բլուրը, որով-
հետև այնտեղ, նրանց կարծիքով, աւելի շուտ
կարելի էր շուր ու ճանապարհ գտնել:

Ահա նրանք ուղևորւեցին:

Ճապոնացու վիրաւոր ոտքը բոլորովին չէր
գործում և նա պէտք է մի ոտքի վրա թռչկո-
տէր, մի կողմից Ստեփանի առողջ ձեռքին յեն-
ւած, իսկ միւսից Ստեփանի հրացանին: Իր
հրացանը պիտի դէն գցէր, որովհետև խանգա-
րում էր:

Համարեա ամեն մի ըոպէ ցաւից տնքալով,
կանգ առնելով ու իրար բռնելու ձևը փոփոխելով
վիրաւորները կողմնացոյցի օգնութեամբ առաջ
էին գնում շրջապատը քողարկող խիտ գաօլեա-
նի միջով:

Վերջապէս, հէնց արևի մայր մտնելուն,
դուրս եկան մի բաց տեղ, որ ուղիղ իրենց ու-
ղած բլրի ստորոտումն էր: Դեռ հազիւ մի քա-
նի քայլ արած լինէին նրանք այնտեղ, որ չորս
կողմից յանկարծ լուեց.

— Բանգայ, ոռւսներ, կեցցէ կեցցէ:

Եւ նրանց իսկոյն շրջապատեցին ճապոնա-
ցիք, որ վաղուց լեռան գլխից նկատել էին նը-
րանց գաօլեանով անցնելիս ու սպասում էին
այնտեղ նրանց դուրս գալուն:

Տեսնելով թշնամիներին՝ վախեցած Ստե-
փանը դուրս կորցեց ընկերոջ ձեռքից հրացանը
և նետուեց գաօլեանի մէջ փախչելու նպատակով,
յոյս ունենալով այնտեղ պահւելու, բայց ճա-
պոնացիք նրա առաջը կտրեցին:

— Լաւ, ոռւս, ապրես, ոռւս, — լաւում էր

նրանց միջից խրախուսական բացականչութիւնները կոտորած ոռուերէնով և նրանք բարեկամական նշաններով աշխատում էին ցոյց տալ Ստեփանին, որ նպատակ չունեն նրան փասելու:

Սակայն Ստեփանը նրանց միտքը չէր հասկանում և պատրաստել էր արդէն սւինով ճանապարհ բանալու, որ Գանկօն ինչ որ ընկերներին ասաւ ու կանչեց.

—Էհէյ, Ստեփան, մի վախենայ, քեզ ոչ մի վնաս չեն հասցնի սրանք: Սրանք տեսել են թէ ինչպիսի հոգատարութեամբ էիր դու վարւում քո թշնամու հետ, և շատ զգացւած են քո վեհանձն վարմունքից. սրանք խնդրում են ինձ ասեմ քեզ, որ դու մնաս մեզ մօտ որպէս հիւր և ոչ թէ գերի:

Ստեփանը սկզբում թերահաւատութեամբ նայեց շրջապատող թշնամիներին, բայց յետոյ վճռեց, որ միենոյն է, դիմադրել անօգուտ է, ուստի հնազանդեց:

Շուտով երկու վիրաւորին էլ հասցրին ճապոնական բանակը, որը հեռու չէր այդտեղից, համարեա բլրի ետեւն էր: Այդտեղ ճապոնացի բժիշկը քննեց վիրաւորներին և վէրքերը նորից կապեց: Ստեփանի վէրքը աննշան բան էր, ոսկորը անփաս էր, նրան կարիք չը կար հիւանդանոցում պարկեցնել:

Ստեփանի ճապոնացոց մէջ եղած բոլոր ժամանակ նրա հետ վարւում էին քաղաքա-

վարի և նախատեսնում էին նրա բոլոր ցանկութիւնները: Նրան տրւած էր լիակատար ազատութիւն և եթէ նա ցանկանար, կարող էր ամեն մի բոպէ հեռանալ ճապոնացոց բանակից: Բայց նրան ասացին, որ ի նշան շնորհակալութեան, նրա վիրաւոր ճապոնացու մասին տարած հոգատարութեան համար, նրան գիշերը ճապոնացի զինւորները ճանապարհ կը դնեն մինչև ոռուների բանակը: Այդ պատճառով Ստեփանը չէր շտապում հեռանալ այդտեղից:

Երբ հասաւ ճանապարհելու ժամանակը, Ստեփանը գնաց հիւանդանոցի վրանը, ուր պարկած էր իր բարեկամը, մնաս բարև ասելու:

—Իէհ,—ասաւ Գանկօն,—շատ շնորհակալ եմ քեզանից, որ դու ինձ գաօլեանի մէջ չը թողիր մեռնելու: Ահա քեզ ինձանից յիշատակ իմ ապարանջանը ժամացոյցով ու կողմնացոյցով, սրանք քեզ կարող են պէտք գալ, իսկ իմ զինւորական պաշտօնս արդէն վերջացած է: Բժիշկը ասաւ որ ոտքս պիտի կտրեն, որովհետև զնդակը ջարդել է սրունքս, իսկ առանց ոտքի էլ ի՞նչ զինւոր կարող եմ լինել: Գնաս բարև, ողջ եղիր:

Եւ նա ամուր ու զգացւած սեղմեց Ստեփանի ձեռքը, որը համարեա արտասուելով բաժանւեց իր տարաբախտ թշնամուց:

Նոյն գիշերը, լուսաբացին մօտ՝ ճապոնացիք իրենց հովանաւորութեան տակ Ստեփանին հասցրին

նուսաց գիրքերը և ազատ թողին: Իսկ միև
օրը երեկոյեան նա արդէն իր խմբի մէջ էր
նստած և պատմում էր ընկերներին իր գլխի
եկածը, ցոյց էր տալիս ժամացոյցը և բացա-
տրում կողմնացոյցի գործածութեան եղանակը:



„ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խմբագրութեամբ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

1. Գատցուկ—Ամիրան Դարեջանիձէ, փոխ. Ա.թ. Խնկոյեանի 25 կ.
2. Սէյրի—Դերձակի աշակերտը, վողբելի 10 »
3. Աղւէան ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պսակ—
պսակ—պատկերագարդ հեքիաթներ 10 »
4. Ս. Գալաչեան—Կապիկներ, բնագիտ. զրոյց 10 »
5. Մարկ Տէէն—Մահւան օղակը. պատմաւածք,
թարգմ. Մ. Թաւաքալեանի 7 »
6. Կ. Ստանիկովիչ—Պատիկ նաւաստին. պատ-
մաւածք, թարգմ. Սիմակի 5 »
7. Մարգար Անտիսեան—Երեք խրատ. Պղնձէ
քաղաքի զրոյցներից 20 »
8. Ը. Սէտոն-Տոմպոն—Վինիպեգի գայլը. պատ-
մաւածք հերոս կենդանիների կեանքից, թարգ.
Սիմակի 20 »
9. Լ. Պրայս եւ Չ. Ջիլբերտ—Առասպելական հե-
րոսներ. թարգմ. Գ. Իփէկեան 20 »
10. Ռուբէն Գարրիէլեան—Ովկիանի թագաւորը.
Կէտի մասին, բնագիտական զրոյց 10 »
11. Մարդակերի աղջիկն ու խորհրդաւոր վար-
պետը. Իտալական հեքիաթ. Ռուսերէնից
թարգմ. Յովհ. Թումանեան 10 »
12. Խ. Բ. Բարայեան—Նոր ընկերուհի, Մանկա-
կան պիէս, մէկ արարւածով: 10 »
13. Գ. Մեսեան—Ոսկեպողբ, արեւելեան աւանդ. 10 »
14. Փր. Փոկս—Մի ժամայ նախարարը,
պատմաւածք թարգմ. Ա.թ. Խնկոյեանի 15 »
15. Զիպօն և Պիպօն 25 »
16. Բ. Կիպլինգ—Կոտուկօ, պատմաւածք թարգմ.
Նիկ. Մարգսեան 15 »
17. Դր-Ամիրչիս—Կարմիր մեխակ, պատմաւածք,
թարգմ. Բ. Վարդանեան 8 »
18. Աղաբար—Թուխը, մանկական հեքիաթ 12 »
19. Սօֆիա Գալաչեան—Այգեպանի մօտ 10 »
20. Ուիդա—Տափաստանը, պատմաւածք 10 »
21. Ս. Տէր-Անտիքեան—Ուխտաւորները, Ան-
տառի գիւտը 8 »
22. Ս. Ս.—Պատահական ընկերութիւն. 4 »
23. Եփրեմ Մարգսեան—Փրոթկանը 4 »
24. Ինֆանցիել—Թշնամիներ թարգ. Սօֆ. Գալա-
տեանի 8 »

Դիմել «Հասկերի» խմբագրութեան. Тифлисъ,
редакция „Аскеръ“.

« Ազգային գրադարան



NL0319658

11.315